ՀՀ աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարարություն
<< Գյումրիի երեխաների խնամքի և պաշտպանու-
թյան թիվ 1 գիշերօթիկ հաստատության >>
պետական ոչ առևտրային
կազմակերպություն

Министерства труда и социальных
вопросов Республики Армения,
государственная не коммерческая
организация
Гюмрийский интернат № 1 по уходу
и защите детей

Gymri Children Care and Protect ion Boarding Inst it ution State Non Commercial Organization of Ministry of Labour and Social Issues of the Republic of Armenia

377522 , Հայաստանի Հանրապետության ,
ք. Գյումրի, Ե. Չարենցի 4

☎ հեռ; 6-62-33
ֆաքս; 6-62-33

377522, Республика Армения.
Г. Гюмри ул. Е. Чаренца 4

Թիվ <<04>> 07 2014թ.

ՆՀՔ 70/14

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն>> ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ:
Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «**ԳԵԽՊ-ՇՀԱՊՁԲ-14/4**»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Գյումրի Չարենցի 4 , մինչև 2014թ. Հուլիսի 15-ը, ժամը 10:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Ա. Երանոսյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն ք. Գյումրի Չարենցի 4 հասցեում՝ տնօրենի սենյակում , 2014թ. Հուլիսի 15-ին , ժամը 10:00-ի: Գնման առարկա է հանդիսանում << Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն >> ՊՈԱԿ -ի կարիքների համար՝ հանդերձանքի ձեռքբերումը:

<< Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն >> ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ հանդերձանքի մատակարարման (որոնք կազմված են՝ 22 չափաբաժնից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը ներկայացված են կից ներկայացված պայմանագրի նախագծի N 1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:
Մասնակիցները հայտով ներկայացնում են նաև իրենց կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական նկարագրերը:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և մասնակիցների կողմից ներկայացվող փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

<< Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն >> ՊՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝gisherotik@mail.ru

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

" տնօրեն

Գ. Ջատիկյան

Կ.Տ